ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Հրաչիկ Միերյանը, Սյուզաննա Մնոյանը, Թեհմինե Պողոսյանը, Համլետ Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորաին Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.05.2018 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել «ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը »՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 30.05.2018 թվականի N 37-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը՝

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հանրային բաց լսումների ու (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի N 31-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարը սնուցող խմելու ջրի կառուցված ջրագիծը համայնքի հաշվեկշիռ ընդգրկելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 18.12.2017 թվականի N 10-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 30.05.2018 թվականի N 37-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

8.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Ծաղկահովիտ համայնքի ավագանին, **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2023 թվականի փետրվարի 16-ը, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կող-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԸ ՍՆՈՒՑՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՋՐԱԳԻԾԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքի Վարդաբլուր բնակավայրում կառուցված օրվա կարգավորիչ ջրամբարը սնուցող խմելու ջրի ջրագիծը համայնքի հաշվեկշիռ ընդգրկելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքի Վարդաբլուր բնակավայրում կառուցված օրվա կարգավորիչ ջրամբարը սնուցող խմելու ջրի ջրագիծը ընդգրկել համայնքի հաշվեկշիռ **3 460 000 (երեք միլիոն չորս հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամ սկզբնական արժեքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանում 2022 թվականի մայիսի 11-ի N 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
- որոշման 2-րդ կետում «Սևակ Արծրունու Մուրադյան - Գեղարոտ միջնակարգ դպրոցի տնօրեն, ավագանու անդամ » բառերը փոխարինել « Արծրուն Արտավազդի Ավետիսյան - ավագանու անդամ » բառերով,
- որոշման 2-րդ կետում « Մամիկոն Ռաֆիկի Հարությունյան - Ծաղկահովիտի առողջության կենտրոն ՓԲԸ-ի մանկաբույժ » բառերը փոխարինել «Ջիվան Լուկաշի Սանոսյան - Ծաղկահովիտի առողջության կենտրոն ՓԲԸ-ի փոխտնօրեն » բառերով,
- որոշման 2-րդ կետում «Լուսինե Արամայիսի Մկրտչյան - Ծաղկահովիտ համայնքի Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն » բառերը փոխարինել «Անահիտ Վարդգեսի Բոյաջյան - Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամ » բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ն/

Լսեցին

ԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի, 37-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել « ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի և 3-ի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՈՒ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի, «Քաղաքաշինության մասին » ՀՀ օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածների, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել «ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող, Գեղադիր բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նշանակության, 02-030-0106-0033 կադաստրային ծածկագրով 1,38387 հա և Ծիլքար բնակավայրում գտնվող, 02-056-0110-0004 կադաստրային ծածկագրով 1,01196 հա հողատարածքները մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

2. Վարձակալության տրամադրվող գյուղատնտեսական նշանակության 02-030-0106-0033 կադաստրային ծածկագրով, 1,38387 հա հողատարածքի մեկնարկային գինը սահմանել 9000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 4000 ՀՀ դրամ:

3. Վարձակալության տրամադրվող գյուղատնտեսական նշանակության 02-056-0110-0004 կադաստրային ծածկագրով, 1,01196 հա հողատարածքի մեկնարկային գինը սահմանել 7000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 3000 ՀՀ դրամ:

4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի » 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Թույլատրել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքները.

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Հոկտեմբերյան փողոց, 1-ին փակուղի թիվ 4/5 հասցեում գտնվող, 02-053-0001-0098 կադաստրային ծածկագրով, 0,09857 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող, 02-078-0038-0040 կադաստրային ծածկագրով, 0,04536 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն բնակավայրի 9-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող, 02-078-0008-0004 կադաստրային ծածկագրով, 0,024 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական -արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-030-0103-0094 կադաստրային ծածկագրով, 1,01608 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-030-0103-0096 կադաստրային ծածկագրով, 0,17661 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-030-0103-0097 կադաստրային ծածկագրով, 0,12767 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի 20-րդ փողոց 7/2 հասցեում գտնվող, 02-065-0012-0019 կադաստրային ծածկագրով, 0.11153 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի 20-րդ փողոց 7/5 հասցեում գտնվող, 02-065-0012-0018 կադաստրային ծածկագրով, 0.14577 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի 20-րդ փողոց 7/6 հասցեում գտնվող, 02-065-0012-0020 կադաստրային ծածկագրով, 0.05818 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 1-ին փողոց 8 հասցեում գտնվող, 02-032-0031-0010 կադաստրային ծածկագրով, 0.24571 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 2-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող, 02-032-0014-0009 կադաստրային ծածկագրով, 0.12309 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 4-րդ փողոց 4/1 հասցեում գտնվող, 02-032-0012-0009 կադաստրային ծածկագրով, 0,05467 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 6-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող, 02-032-0004-0018 կադաստրային ծածկագրով, 0.12953 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը ,

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի Երևանյան մայրուղի 16/1 հասցեում գտնվող, 02-032-0012-0018 կադաստրային ծածկագրով, 0.01789 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը ,

2. Օտարման ենթակա հողատարածքների մեկնարկային գին սահմանել՝

ա/ Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատարածքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 /մեկ հարյուր քառասուն մեկ դրամ ինը լումա / ՀՀ դրամ:

բ/ Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի՛ օտարման ենթակա հողատարածքի համար տվյալ հողատեսքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 336,6 /երեք հարյուր երեսուն վեց դրամ 6 լումա / ՀՀ դրամ:

գ/ Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատարածքների կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 / մեկ հարյուր քառասունմեկ ՀՀ դրամ վեց լումա / ՀՀ դրամ :

Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատարածքների կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 217,8 / երկու հարյուր տասնյոթ ՀՀ դրամ ութ լումա / ՀՀ դրամ:

ե/ Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատարածքների կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 217,8 / երկու հարյուր տասնյոթ ՀՀ դրամ ութ լումա / ՀՀ դրամ:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-3 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.12.2017 ԹՎԱԿԱՆԻ N 10-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել «ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՄՅԱՍՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Արայիկ Ավետիսյանը _____